ԳԻՏԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՏԻԳՐԱՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի քաղաքագիտության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅԿ ՂՈՒԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՈՒՐՋ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հոդվածում ներկայացված վերլուծությունը փաստում է, որ Ֆրանսիան որպես Մինսկի խմբի համանախագահ ընդգրկված է Լեռնային Ղարաբաղում խաղաղության հաստատման գործընթացում, և գործելով հանուն խաղաղության հաստատմանը՝ ձգտում է գրավել հավասարակշիռ դիրք: Ֆրանսիայի ղեկավարությունը ստիպված է հաշվի առնել հակամարտող կողմերի շահերը և միաժամանակ առաջ մղել իր էներգետիկ, առևտրա-տնտեսական, քաղաքական, ռազմական շահերը տարածաշրջանում: Չպետք է մոռանալ նաև Ֆրանկոֆոնիայի գործընթացը, որը նույնպես որոշակի դեր է խաղում: Այդուհանդերձ, գործընթացի կարգավորման քսան տարուց ավելի պատմությունը վկայում է, որ Ֆրանսիան ավելի մոտ է կանգնած Հայաստանի դիվանագիտական տեսակին, քան Ադրբեջանին: Դրանում իր լուման ունի նաև հայ և ֆրանսիացի ժողովուրդների, այդ երկու երկրների միջև ձևավորված պատմական բարեկամական կապերը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. Ղարաբաղյան հակամարտություն, Մինսկի խումբ, գործընթաց, կողմ, բանակցություն, խաղաղություն, միջնորդական առաքելություն, համանախագահ:

Ֆրանսիայի հետ հարաբերությունները առանձնացված նշանակություն ունեն Հայաստանի համար Ղարաբաղի հակամարտության կարգավորման տեսակետից: Ֆրանսիայի և Հայաստանի պետական ու հասարակական գործակցության ներուժը ամրապնդվում է այն փաստով, որ այդ երկրներին միավորում են զարգացած և լավ կառուցված պատմական ավանդույթները: Հաջորդ գործոնը հանդիսանում է Ֆրանսիայի հնարավորությունների առկայությունը միջազգային ազդեցության ոլորտում՝ որպես ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի մշտական անդամի, Եվրոպական ինտեգրացիայի «շարժիչի» և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողի: Նշենք, որ Ֆրանսիան ԵՄ միակ առաջավոր երկիրն է, որը մասնակցում է նման բարձր մակարդակի կարգավորման գործընթացում:

Նման իրավիճակը նպաստում է Ֆրանսիայի դերի բարձրացմանը Հարավային Կովկասի տարածաշրջանում, որը հիմնվում է Հայաստանի հետ առկա ավանդական և գործընկերային հարաբերությունների վրա: Ընդունելով Ֆրանսիայի նման դերակատարությունը կարգավորման գործընթացում՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի համար այն հետզհետե ստանում է ավելի ազդեցիկ նշանակություն:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդի փուլը սկսվել է 1988թ., երբ ի պատասխան ԼՂ բնակչության ինքնորոշման պահանջի, ադրբեջանական իշխանությունները կազմակերպեցին հայ բնակչության կոտորածներ ու էթնիկ զտումներ Ադրբեջանի ողջ տարածքում, մասնավորապես՝ Սումգայիթում, Բաքվում և Կիրովաբադում: 1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂ-ի բնակչությունը հանրաքվեով ամրագրեց անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը, որը լիովին համապատասխանում է ինչպես միջազգային իրավունքի նորմերին, այնպես էլ այն ժամանակվա ԽՍՀՄ օրենքների տառին և ոգուն: Այսպիսով՝ նախկին Ադրբեջանական ԽՍՀՄ տարածքում ձևավորվեցին երկու իրավահավասար պետական կազմավորումներ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և Ադրբեջանի Հանրապետությունը [1]:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը 1992թ. մարտին ձեռք բերեց միջազգային բնույթ: Առաջին անգամ ԵԱՀԿ-ի հետ շփումները հակամարտող կողմերի հետ սկսվեցին 1992թ. մարտի 24-ին Հելսինկիում, որտեղ որոշում կայացվեց ԵԱՀԿ հովանու ներքո հավաքվել Բելառուսի Մինսկ քաղաքում՝ Ղարաբաղյան հարցի կոնֆերենցիայում, որը կապահովի հակամարտության խաղաղ կարգավորման նպատակող աշխատանքների իրականացումը: Գործընթացը կոչվեց Մինսկի կոնֆերենցիա, ինչը հետագայում վերափոխվեց որպես երեք երկրների (ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա) մասնակցությամբ Մինսկի խումբ: Այս իրադարձություններով հիմք դրեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափին (կոնֆերենցիայի անցկացման տեղի անունով):

Սկզբում խմբի մեջ մտավ ինը երկիր՝ Բուլղարիա, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, Թուրքիա, Ֆրանսիա, Չեխոսլովակիա, Շվեդիա, ինչպես նաև ուղղակիորեն կամ միջնորդավորված ձևով երեք երկիր՝ Հայաստան, Ադրբեջան և ԼՂՀ-ի ընտրված ներկայացուցիչները (վերջիններս միայն որպես շահագրգռված կողմ): Հետագայում Մինսկի խումբը ենթարկվեց փոփոխության՝ Չեխոսլովակիային փոխարինեց Հունգարիան, ընդգրկվեցին Ֆինլանդիան և Շվեյցարիան [2]:

Բանակցությունները Մինսկի խմբի շրջանակներում, ոչ արդյունավետության պատճառով ժամանակավորապես կասեցվեցին 1993թ. հոկտեմբերին: Եվ միայն 1994թ. դեկտեմբերի 5-ը Բուդապեշտ քաղաքում հրավիրված ԵԱՀԿ համաժողովում որոշում ընդունվեց ԵԱՀԿ ճիգերը միավորելու նպատակով ստեղծելու ենթանախագահների ինստիտուտ (ԵԱՀԿ շրջանակներում գործում է Բարձր մակարդակի ծրագրման խումբը, որի մանդատն ընդունվել է 1995թ. մարտին): 1995թ. հիմնվել է ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովին վերաբերող հակամարտության հարցով ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի պաշտոնը, որը 1996թ. հուլիսից զբաղեցնում է դեսպան Անջեյ Կասպրշիկը (Լեհաստան) [3]:

ԵԱՀԿ շրջանակներում Հայաստանը սկսեց համագործակցել Ֆրանսիայի հետ հիմնականում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ոլորտում: Մինսկի խմբի Ֆրանսիայի համանախագահը բազմաթիվ անգամ իր անհանգստությունն է հայտնել ղարաբաղյան հակամարտության ձգձգման կապակցությամբ, որը լրջորեն վնասում է Հարավկովկասյան տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանը, բերում է հազարավոր մարդկային զոհերի: ԵԱՀԿ շրջանակներում Ֆրանսիան իր վրա պարտականություն վերցրեց աջակցելու կողմերի ջանքերին բանակցությունների միջոցով կարգավորելու հակամարտությունը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում Ֆրանսիայի շա-

հագրգռվածությունն այն է, որ լինելով ԵՄ առաջատար երկրներից մեկը, Ֆրանսիան շահագրգռված էր Հարավային Կովկասում հակամարտության կարգավորմանը, ինչը բխում է ԵՄ շահերից:

Փաստորեն, ռազմական գործողությունների ավարտը (1994թ. Բիշկեկյան զինադադար) համընկավ նոր ձևաչափով բանակցությունների գործընթացի ձևավորման հետ: ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանը, ընդգծելով այդ կառույցի նշանակությունը, նշում է, որ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնական թատերաբեմը [4]:

1994թ. մարտից մինչև դեկտեմբեր ամիսները բանակցության գործընթացն անցկացվեց Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի փորձագետների մակարդակով խորհրդակցություններ անցկացնելով: Այդ իրավիճակը լարվածություն առաջացրեց Ռուսաստանի և ԵԱՀԿ-ի միջև: 1994թ. դեկտեմբերին Բուդապեշտում անցկացված ԵԱՀԿ համաժողովում ձևավորվեց ընդհանուր կարծիք՝ ընդունվեց որոշում միավորելու Ռուսաստանի և ԵԱՀԿ ջանքերը: Համաժողովը որոշեց ստեղծել Մինսկի կոնֆերենցիայի համանախագահների և Մինսկի խմբի ինստիտուտ: Ընդ որում, Ռուսաստանը հանդիսանում է մշտական համանախագահ, և դրա հետ միասին Մինսկի գործընթացը գլխավորեցին 1995 թվականին Շվեդիան, 1996 թվականին՝ Ֆինլանդիան, իսկ 1997 թվականից կազմավորվեց Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի համանախագահների տարբերակը:

Բուդապեշտում համաժողովի անդամ-երկրները ողջունեցին հակամարտության կողմերի՝ Հայաստան, Լեռնային Ղարաբաղ և Ադրբեջանի միջև 1992թ. մայիսի 12-ին ձեռք բերված զինադադարի պայմանավորվածությունը, իրենց պատրաստակամությունը հայտնեցին կողմերի վերջնական պայմանավորվածության արդյունքում հակամարտության դադարեցումից հետո նպաստել ԵԱՀԿ խաղաղապահ ուժերի տեղաբաշխմանը:

1996թ. դեկտեմբերին Լիսաբոնյան համաժողովում ընդունվեց բանաձև՝ բաղկացած երեք կետից՝

1. Հայաստանի և Ադրբեջանի տարածքային ամբողջականություն.

2. Լեռնային Ղարաբաղի համար այնպիսի կարգավիճակ, որը հիմնված կլինի ժողովրդի ինքնաորոշման իրավունքի վրա (տվյալ իրավիճակում՝ ամենաբարձր կարգի ինքնորոշում Ադրբեջանի կազմում).

3. Լեռնային Ղարաբաղի և նրա բնակչության երաշխավորված անվտանգություն:

Լիսաբոնյան համաժողովը հիմք ընդունեց տարածքային ամբողջականության սկզբունքը և շրջանցեց ազգի ինքնորոշումը: Նման մոտեցումը Երևանի և Ստեփանակերտի կողմից գնահատվեց որպես միտումնավոր: Հայաստանը չընդունեց այդ բանաձևը և համաժողովը դադարեցրեց բանակցային գործընթացը հակամարտության կողմերի միջև:

1997թ. մարտին Մինսկի խմբի առաջին հանդիպման ժամանակ Ադրբեջանը պնդում էր, որ բոլոր բանակցություններն ընթանան «Լիսաբոնյան սկզբունքի» հիման վրա, ինչը որոշակի ժամանակով սառեցրեց բանակցային գործընթացը, իսկ Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը Մինսկի խմբի լայնամասշտաբ ձևաչափում դադարեցվեց, թեև ԼՂ-ն շարունակեց մնալ բանակցային գործընթացի մասնակից:

Բանակցային գործընթացի դադարեցումից հետո կողմերին 1997թ. մայիսին ներկայացվեց փաթեթային առաջարկ: Այն ընդգրկում էր բոլոր հարցերը, այդ թվում՝ կարգավիճակի որոշումը, սակայն տեքստը հիմնվել էր 1996թ. «Լիսաբոնյան սկզբունքների» վրա: Նշված

պատճառով էլ Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը մերժեցին «Փաթեթային առաջարկը», որից հետո անցկացվեցին ակտիվ դիվանագիտական խորհրդակցություններ: Հանդիպումների, զրույցների և խորհրդակցությունների արդյունք հանդիսացավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների նոր նախագիծը: 1997թ. սեպտեմբերին համանախագահները ներկայացրին փուլային կարգավորման տարբերակը [5], ինչը ենթադրում էր տարածքների վերադարձում՝ առանց կարգավիճակի հարցի քննարկման: Ադրբեջանը և Հայաստանը դա ընդունեցին, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ ոչ:

ԼՂ իշխանությունը պնդում էր այնպիսի տարբերակի մշակման անհրաժեշտությունը, որը պետք է հաշվի առներ հանրապետության հայկական բնակչության կարծիքը և համապատասխան կերպով ազդելու Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի որոշման վրա: Փուլային պլանի ընդունումը բերեց ներքաղաքական լուրջ տարակարծության Հայաստանում և քաղաքական ճգնաժամի, ինչը վերջին հաշվով ավարտվեց նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի հրաժարականով:

1998թ. օգոստոսի 22-ին Ֆրանսիայի արտգործնախարար Ցու. Վեդրինը այց կատարեց Իրան, որը կապված էր Իրանի նախագահ Մ. Խաթամիի քաղաքական բարեփոխումների հետ: Իրանն իր արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը և տնտեսական հարաբերությունները տեղափոխեց դեպի Եվրոպա: Այդ այցի ընթացքում երկու երկրների արտգործնախարարները անդրադարձան Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցին: Իրանի արտգործնախարար Խորազին ցանկություն հայտնեց մասնակցելու այդ խնդրի լուծման բանակցային գործընթացին, ինչին պատասխանելով՝ Վերդին հայտարարեց, որ այդ առաքելությունը վստահված է ԵԱՀԿ-ին և Իրանը չի հանդիսանում տվյալ կազմակերպության անդամ: Բայց, միաժամանակ խոստացավ Իրանի կողմից պաշտոնական դիմումի դեպքում համագործակցել և առաջարկել նման դիրքորոշումը քննարկել ԵԱՀԿ Մինսկի խմբի մյուս համանախագահների հետ [6]:

1998թ. Ժ. Շիրակի Մոսկվա կատարած այցի ժամանակ ՌԴ նախագահ Բ. Ելցինի հետ քննարկեցին Ղարաբաղյան հակամարտության հարցը և հանգեցին խաղաղության կարգավորման հարցում համագործակցության [7]: Ենթադրվում էր, որ Ֆրանսիան ու Ռուսաստանը հանդես կգան որպես հակակշիռ ԱՄՆ-ի ադրբեջանամետ դիրքորոշումը:

Փաստորեն, 1997թ. բանակցային գործընթացի դադարեցումից հետո մինչև Հայաստանում իշխանափոխությանը՝ 1998 թվականը, խաղաղ գործընթացը սատարվում էր բացառապես Մինսկի խմբի համանախագահության «մաքոքային (чельночный) դիվանագիտության» միջոցով: Համանախագահները միջին հաշվով տարեկան 2-3 անգամ այցելում էին հակամարտության գոտի, հանդես գալիս առաջարկություններով, բայց դրանցից ոչ մեկը միանշանակորեն չընդունվեց հակամարտող երկրների կողմից:

1998թ. Հայաստանի արտահերթ նախագահական ընտրություններում հաղթեց վարչապետ Ռ. Քոչարյանը: Հանրապետությունում իրականացված ներքաղաքական փոփոխությունները, ըստ էության, չունեցան բացասական հետևանքներ հայ-ֆրանսիական գործընկերային հարաբերությունների վրա: Ընդակառակը, Ֆրանսիայի ԱԳՆ մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձանց նույնիսկ մոտ զարմանք առաջացրեց այն փաստը, որ Լ. Տեր-Պետրոսյանը իր վրա մեծ պատասխանատվություն վերցրեց՝ ընդունելով Մինսկի խմբի կողմից առաջարկված հակամարտության փուլային կարգավորման տարբերակը: Ռ.Քոչարյանին ՀՀ նախագահ ընտրելու և Լ.Տեր-Պետ-

ռոսյանի հեռացումը, Ֆրանսիայում դիտարկվեց որպես նոր հնարավորություն Հայաստանին դուրս բերելու խոր ճգնաժամից՝ հաշվի առնելով Ռ.Քոչարյանի դիրքորոշումը հակամարտության կարգավորման հարցում: Ռ. Քոչարյանն ընկալվեց որպես քաղաքական լիդեր՝ ունակ շարունակելու հակամարտության կարգավորման գործընթացը [8]: Հայաստանի նոր իշխանությունների արտաքին քաղաքականության որոշ մոտեցումներ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հարցում, տարբերվում էին նախկին իշխանությունների քաղաքականությունից:

1998թ. նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն առաջարկեցին նոր բանակցային բազա, որը նախանշում էր խնդրի համակողմանի կարգավորում առանց նախապայմանների բանակցությունների վերսկսումով: Հայաստանը և ԼՂՀ-ն ընդունեցին համանախագահների առաջարկը, իսկ Ադրբեջանը՝ ոչ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների 1998թ. նոյեմբերի այցի ընթացքում Հայաստանը միանշանակ ժխտեց ԼՂ հակամարտության կարգավորման փուլային տարբերակը և առաջարկեց վերսկսել բանակցությունները՝ ընդգրկելով հետևյալ երեք հարցեր՝

– առանց նախապայմանների սկսել հակամարտության կարգավորման համընդհանուր բանակցությունները.

– ԼՂ-ի ներկայացուցիչների ուղղակի մասնակցություն բանակցություններին.

– «ոչ ինքնավարություն, ոչ անկախություն» տարբերակի առաջարկում [9]:

ՀՀ իշխանությունների կողմից ԼՂ բանակցությունների գործընթացի ձևաչափի փոփոխությունը աջակցություն ստացավ Ֆրանսիայի կողմից:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, այսպես կոչված, «Ընդհանուր պետություն» ծրագիրը, որն առաջարկվել է համանախագահների կողմից 1998թ. նոյեմբերին: Նախորդ տարբերակների համեմատ այդ ծրագիրը, անկասկած, առավել առաջադիմական էր, համաձայն որի՝ հակամարտության կարգավորումը պետք է հենվի տարածքային ամբողջականության և ազգային ինքնորոշման իրավունքների վրա:

Հակամարտության կողմերը պետք է բոլոր տարաձայնությունները լուծեն խաղաղ ճանապարհով, և առաջին հերթին, ուղիղ բանակցությունների միջոցով: Համաձայն այդ ծրագրի՝ Լեռնային Ղարաբաղը կունենա իր դրոշը, զինանշանը և օրհներգը: ԼՂՀ պետք է ունենա իր կառավարման մարմինները և սահմանադրությունը:

Նախագծի որոշ դրույթներ, սակայն, ուղղակիորեն ընդունելի չէին ԼՂՀ-ի համար: Օրինակ՝ նախագծի 6-րդ կետում նշվում է, որ Լեռնային Ղարաբաղի բնակչությունն իրավունք ունի ընտրելու իր ներկայացուցչությունը Ադրբեջանի պառլամենտում և մասնակցելու Ադրբեջանի նախագահի ընտրություններին: Փաստորեն այդ կետը նույնացնում է ԼՂ կարգավիճակը, երբ այն գտնվում էր Ադրբեջանի հանրապետության մեջ կարգավիճակով: Աշխարհում ոչ մի երկիր, որը ստեղծվել է ընդհանուր պետության հիմքի վրա (Բոսնիա, Տանզանիա, Կիպրոսի խնդրի կարգավորման տարբերակ, առաջարկված ՄԱԿ-ի նախկին քարտուղար Անանի կողմից) չի հենվում նման տարբերակի վրա: «Ընդհանուր պետության» յուրաքանչյուր սուբյեկտ ինքն է ընտրում իր իշխանության մարմինները, իսկ ընդհանուր կառույցները ստեղծվում են բացարձակապես հավասարության սկզբունքով:

Այդ նախագծի «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին համաձայնագրի» բաժնում խոսվում էր այն մասին, որ ԼՂ իրավունք կունենա հաստատել արտասահմանյան երկրների հետ ուղիղ արտաքին կապեր տնտեսական, առևտրային, գիտական, մշակութային, սպորտային, հումանիտար

ոլորտներում, ինչպես նաև մասնակցել Ադրբեջանի արտաքին քաղաքականության այն հարցերի քննարկմանը, որոնք առչվում են նրա շահերի հետ, սակայն, նման ձևակերպումը նույնպես վերաբերում է առավելապես ինքնավար միավորներին, քան հավասարազոր սուբյեկտներին:

Հատուկ ուշադրության են արժանի այն կետերը, որոնք վերաբերում են քաղաքացիության հարցերին: Նրանք հաստատում էին այն տեսակետը, որ Լեռնային Ղարաբաղի քաղաքացին, որպես անձը հաստատող փաստաթուղթ, կունենա ադրբեջանական անձնագիր «Լեռնային Ղարաբաղ» հատուկ նշումով: ԼՂ դիվանագետները ենթադրում են, որ դրանով հող էր նախապատրաստվում հայ բնակչությանը Ղարաբաղից հեռանալու համար: Վերջնարդյունքում, ԼՂՀ-ն նախագիծը չընդունեց որպես վերջնական, այլ միայն որպես բազա բանակցային գործընթացներ սկսելու համար: Ավելացնենք, որ Ադրբեջանն ընդհանրապես չընդունեց այդ նախագիծը:

2001թ. մայիսին նախագահ Ժ. Շիրակի Հարավկովկասյան տարածաշրջան կատարած այցից և Ռ. Քոչարյանին հանդիպելուց հետո ԵԱՀԿ ֆրանսիական համանախագահը հաստատեց, որ «փուլային կարգավորման տարբերակը սպառել է իրեն, անհրաժեշտ է ներկայացնել ԼՂ հակամարտության կարգավորման այնպիսի առաջարկներ, որոնք հաշվի կառնեն բոլոր կողմերի կարծիքները» [10]: Օրինակը ցույց է տալիս, որ գործընթացը փակուղուց դուրս բերելու համար անհրաժեշտ են կտրուկ և համարձակ քայլեր, որոնք համահունչ են նոր իրողություններին և բխում են երկրի շահերից:

2003-2006թթ. ընթացքում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում չգրանցվեց արմատական փոփոխություն, ինչի համար էլ Ֆրանսիան՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող, նույնպես հանդես չեկավ հատուկ նախաձեռնություններով: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում այդ ժամանակաշրջանում տեղի չունեցան որևէ քաղաքական փոփոխություններ, որից ելնելով էլ անփոփոխ էին մնացել նաև բանակցությունների գործընթացում կողմերի դիրքորոշումները:

ՀՀ նախկին արտգործնախարար Վ. Օսկանյանն իր ելույթներից մեկում հայտնել է հետևյալ կարծիքը՝ «Հաճախ խոսվում է ԼՂ հակամարտության կարգավորման ցածր տեմպերի մասին: Սակայն, հաշվի չի առնվում լուծման ենթակա խնդրի բարդությունները, որոնց թվում ԼՂ կարգավիճակի հարցը նրա ժողովրդի ինքնորոշման իրավունքի հիմքն է հանդիսանում» [11]:

Ելնելով Հայաստանի և Ֆրանսիայի քաղաքական երկխոսության ամրապնդման տեսանկյունից, ինչպես նաև ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ տարակարծության առկայությունից՝ մեծ կարևորություն ստացավ Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակի 2006թ. ամռանը կայացած այցը Հայաստան [12], որի ընթացքում քաղաքական հայտարարություններ արվեցին Հայաստանի արտաքին քաղաքականության առանցքային հարցերի վերաբերյալ: Այնուհետև Ժ. Շիրակը դեմ արտահայտվեց ԼՂ հարցի ԵԱՀԿ շրջանակներից հանելու և այն ՄԱԿ-ի շրջանակներում քննարկելու հարցում: Հաշվի առնելով Ֆրանսիայի վետոյի իրավունքը ՄԱԿ-ի անվտանգության Խորհրդում՝ տվյալ դիրքորոշումը կարելի է համարել որոշակի նվաճում հայկական դիվանագիտության համար, որը կմեկուսացներ Ադրբեջանի նախաձեռնությունը այդ ուղղությամբ: Այսպիսով կարելի էր եզրակացնել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեության հետագա ակտիվացումը նույնպես բխում էր Ֆրանսիայի շահերից:

2007 թվականին համանախագահող երկրները Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցում

ստորագրեցին ևս մեկ փաստաթուղթ, որն ըստ ստորագրման տեղի կոչվեց «Մադրիդյան սկզբունքներ»: Փաստաթուղթը նախատեսում է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հարակից շրջաններից զորքերի դուրս բերման հարցում անցկացնել հանրաքվե:

2008–2013թթ. ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցային գործընթացում էական արդյունքներ չեն գրանցվել, իսկ Ռուսաստանը, ընդհակառակը, ակտիվացրեց իր ուժերը հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ: Դրանք հիմնականում ներկայացվեցին բարձր մակարդակով եռակողմ ներկայացուցիչների հանդիպումներով (ՌԴ միջնորդությամբ):

Ֆրանսիան՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, ձգտում է ապահովել հավասարակշռություն այդ գործընթացում, քանի որ նրան հաջողվում է ներկայացնել ԵՄ դիրքորոշումը ԱՄՆ-ի և ՌԴ-ի զարգացող մրցակցության պայմաններում: Ֆրանսիան հանդիսանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի նախաձեռնող համանախագահող և օգտագործելով եվրոպական քաղաքականության իր հարուստ փորձը՝ կարող է գտնել ու առաջարկել կարգավորման ոչ ավանդական բանաձևեր:

Ֆրանսիայի ներկայացուցիչները պարբերաբար նշում են, որ այստեղ, ինչպես նաև ցանկացած հակամարտության դեպքում, հնարավոր չէ խաղաղության ապահովում առանց փոխզիջումների, որին կարելի է հասնել շահագրգիռ կողմերի ուղիղ բանակցությունների միջոցով: ԵԱՀԿ Մինսկի խմբի հիմնական նպատակը խաղաղ կարգավորումն է, իսկ նրա դիտորդները պետք է հետևեն դրա իրականացմանը:

2008–2013 թվականներին հիմնականում պահպանվեցին այն միտումները և նվաճումները, որոնք գրանցվել էին այդ գործընթացում: Ըստ էության նոր առաջխաղացում չի գրանցվել: Իրավիճակը կտրուկ կերպով փոխվեց 2014 թվականին, քանի որ Ղրիմի միավորումը Ռուսաստանին, վերականգնեց պատմական մեկ անարդարություն (տեղացի բնակչությունն ազատ քվեարկության միջոցով իր կամքն է արտահայտել դուրս գալու Ուկրաինայի կազմից և մտնելու Ռուսաստանի կազմի մեջ): Դրանով ապացուցվեց, թե ինչ նշանակություն է տրվում ժողովրդի ինքնորոշմանը:

20-րդ դարի վերջում Լեռնային Ղարաբաղի քաղաքական ղեկավարությունը և բնակչությունը հանգեցին այն իրողությանը, որ չեն կարող պահպանել իրենց մայրենի լեզուն, մշակույթը, պատմական հուշարձանները, եթե ցանկացած կարգավիճակով մնան Ադրբեջանի կազմում: Ղարաբաղի հակամարտության կողմերը գրեթե միշտ հակված են այն կարծիքին, որ հակամարտության կարգավորումը պետք է լինի փոխզիջումով: Չնայած Հայաստանի, Ղարաբաղի և Ադրբեջանի պաշտոնատար անձանց հանդիպումներում շոշափելի արդյունքներ չեն գրանցվել, այդուհանդերձ ճշգրտվել են տեսակետները (դիրքորոշումները) և փոխզիջման հնարավոր սահմանները: Հայկական կողմը միանշանակորեն է վերաբերվում այն արդարացի պահանջներին, որ՝

1. Լեռնային Ղարաբաղը չի կարող կառավարվել Ադրբեջանի կողմից.
2. Լեռնային Ղարաբաղը պետք է ունենա ընդհանուր սահման Հայաստանի հետ.
3. ԼՂ ազգաբնակչության անվտանգությունը պետք է երաշխավորված լինի:

Հիմնախնդրի լուծման հիմքը Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության հանար ինքնորոշման իրավունքի ամրագրումն է, իսկ Մինսկի խմբի համանախագահների դիրքորոշումները կարող են որոշակի դեր խաղալ վերջնական կարգավորման գործում: Ադրբեջանի դիվանագիտությունը, հանդես գալով տարածքային ամբողջականության օգ-

տին, ձեռնարկում է տարատեսակ քայլեր՝ մոտեցումների պարբերաբար փոփոխման և սահմանային բախումների սրացման միջոցով հիմնախնդրի լուծման բանակցությունները տեղափոխել այլ ատյաններ, ինչը անընդունելի է Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի վարած քաղաքականության համատեքստում: Միջազգային փորձը վկայում է, որ ինչքան երկար է պահպանվում դեֆակտո անկախությունը, այդքանով ավելի է ամրապնդվում միջազգային հանրության և հակամարտող երկրների բնակչության վերաբերմունքը հաստատված «ստատուս-քվոյի» պահպանմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ներկա փուլը, http://www.mfa.am/hy/artsakh
2. Казимиров В. Гуманитарная катастрофа в зоне Карабаха была, может быть, больше, чем ныне вокруг Косово // Международная жизнь. – 1999. – № 5. – С. 13.
3. Հայաստանի Հանրապետություն - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն, http://www.mfa.am/hy/international-organisations/OSCE/.
4. Осканян В. Неоконченное десятилетие: Сборник выступлений. – Ереван, 2005. – С. 319.
5. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ուղիները, Խորհրդարանական լսումներ 29-30 մարտի, 2005թ. ՀՀ ԱԺ, Ե.: 2006, էջ 456:
6. ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 1, գ. 180, թ. 168:
7. ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 1, գ. 180, թ. 170:
8. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման ուղիները, Խորհրդարանական լսումներ 29-30 մարտի 2005թ., ՀՀ ԱԺ, Եր., 2006, էջ 470:
9. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000թթ., Գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, Դիզակ պլյուս հրատ., 2007, 744 էջ: էջ 195.
10. ՀՀ արտաքին գործերի նախարարություն, պատմադիվանագիտական արխիվ, ց. 5. գ. 22. թ. 143:
11. Осканян В. Неоконченное десятилетие: Сборник выступлений. – Ереван, 2005. – С. 319.
12. ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի համատեղ մամուլի ասուլիսը, 29.09.2006թ. // http://2rd.am/hy/Robert-Kocharyani-ev-Jak-Shiraki-hamategh-mamlo-asulis

ВОВЛЕЧЕНИЕ И УЧАСТИЕ ФРАНЦИИ В ПЕРЕГОВОРНОМ ПРОЦЕССЕ ПО УРЕГУЛИРОВАНИЮ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

ТИГРАН КОЧАРЯН

Заведующий кафедрой политологии Международного научно-образовательного центра Национальной академия наук РА, доктор политических наук, профессор

ГАЙК ГУЛЯН

Старший офицер-юрист военного комиссариата РА, подполковник

Представленный в статье анализ показывает, что Франция как сопредседатель Минской группы вовлечена процесс установления мира в Нагорном Карабахе и, действуя во имя мира, стремится завладеть сбалансированными позициями. Французское правительство вынуждено учитывать интересы конфликтующих сторон и одновременно преследовать собственные энергетические, торгово-экономические, политические и военные интересы в регионе. Сле-

дует также учесть процесс Франкофонии, что, несомненно, играет определенную роль. Тем не менее, более чем двадцатилетняя история урегулирования конфликта показывает, что принципы французской дипломатии созвучнее дипломатии Армении, чем Азербайджана. Этому способствовали исторические связи между армянским и французским народами, а также политические отношения между двумя странами.

INVOLVEMENT AND PARTICIPATION OF FRANCE IN THE NEGOTIATION PROCESS ON KARABAKH CONFLICT SETTLEMENT

TIGRAN KOCHARYAN

International Scientific-Educational Centre of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Head of the Chair of Politology, Doctor of Political Science, Professor

HAYK GHOULYAN

National Academy of Sciences, RA, Post Graduate Student of the Institute of Philosophy, Sociology and Law

Presented article analysis shows that France, as a co-chair of the Minsk Group, is involved in the peace process in Nagorno-Karabakh, and acting in the name of peace, tends to take over balanced positions. French government was forced to take into account the interests of the conflicting parties and at the same time promote their own energy, trade and economic, as well as political and military interests in the region. Let us not forget the process of the Francophonie, which also plays a great role. However, more than twenty years' history of the settlement shows that France is close to the diplomacy of Armenia than Azerbaijan. This has also contributed to the historical ties between the Armenian and French nations and the two countries.